Ա. ՏԱՐԻ — ՉՈՐԵՔՇԱԲԹ 30 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1898 — ԹԻՒ 66

ԲԱԺԱՆՈՐԴԱՏՐՈՒԹԻՒՆ

Պուլկարիոյ համար
Տարեկան 10 Ֆր.
Վեցամսեայ 5 »
Արտասահմանի համար տարեկան 12 »
Վեցամսեայ 6 »

ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐԵԼԻ

—)(—

Գրութիւնք ետ չեն տրուիր

—)(—

Ծանուցման տող 20 սանթիմ է. Լրիվ էջ մասնաւոր հատուածներու համար 20 0/0 զեղչ կը լլայ։

ՇԱՐԺՈՒՄ

Նամակ եւ դրամ դրկել խմբագրութեանս հասցէին

—

Редакция на вѣстникъ «Шаржумъ» Варна.

Redaction du journal «Charjoum» Varna (Bulgarie)

—

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

)(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)(

)(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)(

Отговорникъ: А. Сукясовъ.

ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ՊԷՏՔ Է ԽԻՍՏ ԼԻՆԻ

ԴԷՊԻ ԲՈՒՆ ԹՇՆԱՄԻՆ

—)·(—

Երբ գործնական յեղափոխական կեանքը նոր սկսաւ մեր մէջ, մենք, իբր դարեւոր ստրուկ եւ ամէն տեսակ բարոյական ու հոգեկան ախտերով վարակված մի ժողովուրդ, մեր միջից արտադրեցինք ամէն կարգի եւ տեսակի հրեշներ։ Ընկերական սանդուխի ամէն մի աստիճանի վրա, թէ եկեղեցական եւ թէ աշխարհական դասակարգերից՝ միանգամից երեւան եկան վատ անհատներ՝ կենդանի փաստերով ապացուցանելու թէ տաճկական բռնապետութիւնը բարոյական անկման ինչ զզվելի աստիճանի էր հասցրել հայ ժողովրդին։ Նոյն իսկ յեղափոխական փոքրաթիւ տարրը, որ կազմում էր հայ ժողովուրդի սմենամաքուր ու իդեալիստ մասը, եւ պէտք է անցնէր թուլացած ժողովրդի գլուխը, ոգեւորէր, ներանոր սիրտ ու հոգի տար եւ մղէր դէպի զաղափարական սուրբ մարտը, իր միջից արտադրեց այնպիսի անհատներ, որոնք յեղափոխութիւնը շահի ասպարէզ դարձրին, մի տեղ գողացան, մի տեղ ուրացան, մի տեղ կռուից փախան եւ վերջապէս ամենասարսափելին ու զզվելին՝ մատնիչներ դարձան։

Սակայն այդ բոլորը բնական էր յեղափոխութեան առաջին քայլերում. որովհետեւ, մինչեւ գլուխը ստրկութեան մէջ ընկղմված, հայ ժողովուրդը յանկարծակի ցնցվելով յեղափոխական թարմ եւ փոթորկալից հոսանքից, պէտք է դուրս ժայթքէր իր ներսից այն բոլորը, ինչ որ կլանել էր դարերի ընթացքում կեանքի հոտած մթնոլորտում, ճիշդ այնպէս, ինչպէս տաք եւ ապականած օդում, ամէն բան ուռող եւ ոդելից ըմպելիներ խմող մարդը՝ երբ ընկնում է թարմ օդի մէջ, իսկոյն կերած եւ խմածը դուրս է տալիս...

Եւ այդ ապականութեանց արտահոսումը հայ ժողովուրդը պէտք է չարունակէր մինչեւ որ կը զոյանար մի նոր, մաքուր եւ առողջ հայ տարր՝ լացված ու սրբված իր ու թշնամու արեան մէջ, թրջված եւ ամրացած յեղափոխութեան բոցավառ հնոցում։

Այդ մաքուր ժողովրդային տարրը ստեղծելու համար հայ յեղափոխականը ստիպված եղաւ թէ թուրք կառավարութեան դէմ կռուել եւ թէ ամենախիստ կերպով պաժել յեղափոխութեան ցընցումից վիժված զարշելի հայերին, որոնց գոյութիւնը աւելի վնասակար էր հայկական վերածնութեան, քան տաճկական բռնութիւնը։ Մէկը միւսի ետեւից, մեծ ու փոքր վատ հայերը ենթարկվեցին հայ յեղափոխականի խիստ դատաստանին. Աշղեան, Տաճատ, Մամբրէ, Խաչիկ, Մագոսոտ բէյ, Շահբաղ եւ ուրիշները կամ հայ կարիչի զնդակին բաժին դարձան, կամ մի քանի անգամ հոգի տալն ու առան նոր եւ խիստ հայ դատաւորի սարսափից։ Հայ յեղափոխականը պատժական այդ խիստ օրինաններով հայ ժողովրդին սովորցնում էր խիստ լինել դէպի իր վատ անդամը, որը թունաւորում է դաղափարական մթնոլորտը եւ խեղդում հայ իդեալիստ տարրի բարձր ձգտումները։

Այսօր մեր յեղափոխական տարրը, թէեւ ոչ առանց սխալի, չէ որ միայն հռոմի պապն է անսխալ, կատարել է իր մանկավարժական դերը հայ ժողովրդի վերաբերմամբ. ստեղծել է մաքուր ժողովրդային տարր եւ նրա գլուխն անցած լուռ ու մունջ, առանց աղդակից վատերի վրա ուշադրութիւն դարձնելու, պատրաստվում է աւելի մեծ ուժով չափվել իսկական թշնամու հետ, աղդային դերութեան շղթան վերջնականապէս փշրելու համար. բայց հայ վատերը կային եւ կան, նրանք հեռու են զգում իրանց մահուան հրեշակին՝ հայ յեղափոխականին, ծակերից դուրս են եկել եւ նորից հայ յեղափոխականին ստիպում են ուշք դարձնել դէպի իր վատ աղդակիցները՝ ասպարէզը մաքրելու համար։ Բայց այդ գործը հիմա ժողովրդին է պատկանում։ Ժողովրդի պարտականութիւնը է ոչնչացնել եւ չեղոքացնել իր վատ անդամներին, որպէս զի յեղափոխականը իր բոլոր ուշքը դարձնի դէպի օտար եւ աւելի զօրեղ թշնամին։ Հայ ժողովուրդը պէտք է խիստ լինի դէպի իր անբարոյական եւ հայկական վերածնութեան հակառակ ու խոչնդոտ հանդիսացող անդամները. միանգամ եւ ընդ միշտ պէտք է համոզված լինի որ առանց զէնքի եւ յեղափոխութեան ո՛չ տաճկահայատանը կազատվի, ոչ ամբողջ հայ աղգը ապագայ ունի. այդ ուրիշ խնդիր թէ յեղափոխութիւնը եւ ապստամբութիւնը ինչ ձեւով պէտք է լինի, եւ որ հայը հակառակն է քարոզում նա բուն թշնամին է ամբողջ հայութեան։ Հայ ժողովուրդը պէտք է պատժէ այդպիսիներին տաճկատատանում փիզիքական մահով, իսկ արտատանմանում բարոյական։

Եթէ ժողովուրդը դեռ հիմա էլ այդքան բարոյական ուժ չունի ուրեմն մեր տաժ զոհերը բոլորը զուր են անցել եւ հայերիս վիճակված է մինչեւ տաճկի ոտքերը լիզել։

ՎԱՐԴՈ

ՕՐԸ ՕՐԻՆ

ՌՈՒՍԱՀԱՅ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐԸ

—)·(—

Ապահովապէս երկինքէն վրճռուած ըլլալու է որ մեր ներկայ հայ սերունդը, հանդիսատես եւ ենթակայ ըլլայ այն ամենէն մեծ, ամենէն չլսուած զրկանքներուն, որոնք կրնան գործադրուիլ զօրաւորին կողմէն տկարին դէմ, մեր դարուն՝ յուր, մեղսակից եւ անարդար դրութեան շնորհիւ։

Հայաստանի ահռելի կերպով ջարդուած, կողոպտուած հայութիւնը աչքի առջեւ ունեցած առաւելեալ, մխիթարութեան կայծ մը կը զդայինք մեր սրտին մէջ, խորհելով որ գէթ Կովկասի մեր աղդակիցները, ազգին կէսը, լաւագոյն պայմաններու տակ կապրի եւ թէ իրմէն չը խլուիր ոչ կեանք, ո՛չ պատիւ եւ ո՛չ ազգային գոյութիւնը պահպանելու անհրաժեշտ միջոցները։ Երա՞զ։ Հոն ալ ուրիշ թշնամի մը, քրդէն եւ թուրքէն ո՛չ նուազ ամեհի, ռուսացումը՝ նախճիրներ կը գործէ հայ մանկութեան մէջ. եւ բարոյապէս կը ջախջախէ անոնց դանկերը, իր ձեռքը ունենալով ճոկանի մը տեղ՝ լուսաւորութեան նախարարին հրամանագրերը։

Եւ մենք, ու մեզի հետ աշխարհ համօրէն առանց բողոքի ճիչ մը արձակել կարենալու, ներկայ կը դտնուինք դարուս ամենէն մեծ կողոպուտին, այն անհաւասար կռուին որ տեղի կունենայ հայ մանուկին եւ ցարերու ահագին կայսրութեան միջեւ։

Եւ իր ամարդի ճնշումները ի գործ դրած ատեն, ռուս կառավարութեան փաստերը այնքան տկար են, որ մարդս կապշի թէ ինչպէս այնքան հնարամիտ դիւանագէտներ անլարող եղեր են աւելի պատուաբեր պատրուակներ ստեղծելու։ Անցեալ անդամ արդէն թուած էինք այն խիստ պայմանները որոնցմով հայ վարժարանաց վերաբացումը կարտօնուէր։ Ուսուցիչները կրթական նախարարէն պիտի ընտրուին. որմէ կը հետեւի թէ պարզապէս ռուս պաշտօնեայներ պիտի ըլլան. եւ բոլոր այն հայ ուսուցիչները որ մինչեւ հիմա այնքան օգտակար եղած էին իրենց հայ մանկավարժի ուղղութիւնով, յանէա չպիտի կրնան մուտք դտնել կրթական յարկերու մէջ։ Ամէն առարկայ, բացի հայ լեզուէ եւ հայ եկեղեցւոյ վարդապետութենէն, ռուս լեզուով պիտի աւանդուի։ Այն դպրոցները միայն, որոնք իրենց սեփական եւ կամուտով կը մատակարարուին, իրաւունք ունին հայ աշակերտ ընդունելու. իսկ անոնք որ կալուածական եկամուտէ դուրս՝ աշակերտներու թոշակին կարօտ են, անոնք ռուսական պարզ վարժարաններ դարձած են, թէ եւ դպրոցին շէնքը հայուն ստաց-

ուածքն է, և ծախքերը կատակներով, նուիրատուութիւններով զէթ մասամբ ապահովուած էին։

Եւ այս ուսումնական դպրոցներուն մասակարարութեան համար է, վրացիին, թուրքին և հրէային տղան դասախօսակելու համար է որ հայ հասարակութիւնը պիտի պարտաւոր ըլլայ միշտ տալու այն որոշ գումարները զորս մինչեւ հիմա կամաւոր կերպով կը վճարէր մնմիայն իր զաւակները կրթուած տեսնելու նպատակով։ Ի՞նչ, հայ աշակերտներէ թոշակ ստանալը այդ քա՞ն մեծ ոճիր է որ կառավարութեան մը իրաւունք տայ դրաւելու չէնքդ ալ, հասոյթներդ ալ, և քեզ ու զաւակներդ դուրս թափէ, իր ուսուցիչները և ուսուցիչները լեցնելու համար հոն։ Գործը՝ իր կոշտ միջոցներով և պատրուակներով այնպիսի ամբողջութիւն մը կը կազմէ որուն մէջ ամենէն զօրաւոր մանրադէտը իսկ ի զուր պիտի փնտռէր աղատամտութեան և քաղաքակրթութեան հիւլէ մը։ Կովկասցի հայերը իրենց լռիկ ցաւերուն մէջ կը դալարուին։ Կաթողիկոսին դիմումները դէթ մինչև հիմա ապարդիւն են. և յոյսը մնացած է միայն իր Բէթերսպուրկ ընելիք առաջիկայ ճամբորդութեան ելքին վրայ։

ԳԱՄԵՐ-ԱՐՇԱՒԻՐ

ՆԱՄԱԿԱՏՈՒՓ

Տ. Մ. Մ. Ակարիչ Ամերիկա. — Կը խնդրենք որ ձեր հասցէն հաղորդէք խմբագրութեան։

Տ. Վ. Մ. Փոքշան. — Ստացած ենք։

Տ. Լ. Ռուսչուք. — Ձեր ոտանաւորը շատ սիրուն սակայն չափէն աւելի երգայն է. այդ պատճառով չպիտի հրատարակուի։

—)·(—

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Թաւրիզ, 1 Մայս.

Սարաջեան վարդապետ եւ «Նոր-Կեանք». — Լազարեան Ճեմարան. — Ասորիների հաւատափոխութիւնը. — Հայերի մտայրութիւնը. — Բարանդուզի քրմախուս հայ զիւղերի վիճակը. — Կարատաղ. — Պարսից վերին ժողովուրդը. — Էմիր-Նիզամ. — Բարեգործութիւնը շահագործուում է։

—

Ընթերցողներից շատերը թերեւս յիշում են անցեալ տարի տեղումս պատահած խառնակութիւնները եւ թալանը, որ պարսիկները ամբաստանում էին ռուսաց կոնսուլատում ծառայող մի հային, որպէս թէ նա հայհոյած լինէր մի պարսիկ կնոջ, եւ հէնց այս պատճառով պարսիկ քաղցած ժողովուրդը յարձակվեց Լիւլավայի հայերի տների վրա, կողոպտեց, թալանեց, եւ փողոցներում ձեռքն ընկած հային թակեց։ Հայերի մէջ սարսափը տիրել էր, հարիւրաւոր ընտանիքներ ապաստանում էին ռուսաց եւ ֆրանսիացոց կոնսուլատներում եւ ապահովութիւն էին խնդրում։

Ռուսաց կոնսուլ-գէներալ Պետրով, զօրաւոր միջնորդութիւն գործ դրեց եւ հայերին պաշտպան կանգնեց, ազդու եւ վճռական կերպով յայտարարեց պարսից կառավարութեան, որ եթէ երկիրը չը հանդարտի, անմիջապէս ռուսական կազակները մտնելու են Թաւրիզ կարգը վերահաստատելու...։

Այս միջոցին տակաւին կատարեալ ապահովութիւն չէր տիրում, հայերը կոնսուլաններից դուրս չէին եկել, ռուսաց եւ ֆրանսիացոց կոնսուլատները քաղաքը անապահով դրութեան մէջ էին ցոյց տալիս, իսկ սորա հակառակը պնդում էին անգլիացոց եւ Թուրքաց հիւպատոսները։ Ոսկէ առրոպէ սպասվում էր նոր դէպքերի, որի հետեւանքը լինելու էր ռուսական կազակների մուտքը Թաւրիզ։

Այս սպառնական ճգնաժամում, ռուսաց Թաջիր բաշի Սարգիս Ցուռնեան փոխ առաջնորդ Սարաջեան հայր սուրբի մօտ է գալիս եւ խնդրում, որ ժողովուրդի անապահով դրութիւնը հեռագրի Շահին եւ ազդեցիկ միջոցներ խնդրի։ Սարաջեան իրա դիւանագիտութեան վրա վրատահ (.°), իր մօտից հեռացնում է Թաջիր բաշին, նոյն իսկ ազատվում..., եւ իւկոյն հեռագրում է Շահին թէ քաղաքում կատարեալ ապահովութիւն է տիրում, եւ թէ կարգը վերահաստատվել է...։

Մի կողմից ռուսաց եւ ֆրանսիացոց եւ միւս կողմից անգլիացոց եւ Թուրքաց կոնսուլատների իրար հակասող յայտարարութիւնների վրա Սարաջեանի հեռագիրը մեծ նշանակութիւն է ստանում, եւ Շահի կառավարութիւնը համարձակվում է մերժել ռուսական առաջադրութիւնը։

Ռուսաց կոնսուլը եւ Թաջիր բաշին սաստիկ հակառակում են եւ ատում Սարաջեանին, եւ Սարաջեան նրանց այս վրէժխնդրութեան չուտով է զոհ գնում, մանաւանդ հակառակ իրան դիւանագիտական հմտութեան (.°) Թաջիր բաշի տարգած ծուռական է ինկնում, նրա կեղծ բարեկամութեան է վստահանում եւ այսպէս գլորվում է ծանր խամուռնքների մէջ, եւ վերջապէս զօրով հրաժարվելով տեղի է տալիս։

Այստեղ հարց է, թէ արդեօ՞ք ռուսական զօրքի մուտքը հայերին նպաստաւոր էր թէ ո՛չ։

Մենք պատասխանում ենք. նպաստաւոր կը լինէր։

Իսկ Նոր-Կեանք հակառակն է պնդում հայր Սարաջեանին իրաւունք տալով եւ նրա հետեւած ուղղութիւնը պաշտպանում է երկար ֆրազներով։

Խնդիրը ալօրիայի կողմից ճշմարիտ է երեւում, սակայն երկիրը ուսումնասիրող եւ ազատ կանխատեսող անհատը պրակտիկայի կողմից տարբեր, բոլորովին հակառակ եզրակացութեան է հասնում։

Մենք ռուսական ճնշող քաղաքականութեան համակրողներից չենք, մենք ատում ենք նոյն իսկ ռուսներին, սակայն խնդիրը երբ քննում ենք հայերի օգտվելու տեսակէտից, մեր վճիռը ռուսական քաղաքականութեան նպաստաւոր է գալիս Պարսկաստանի համար։

Այսպէս համոզվելու գլխաւոր երկու պատճառներ ունենք։

Նախ, որ վաղ թէ ուշ Արեւելեան լինելու է մի ռուսական նահանգ, սրան ոչ ոք չէ հակառակում։

Երկրորդ, որ անցեալ տարվայ խառնակութիւնների միջոցում՝ հայերը հեշտիւ կարող էին պաշտպանողական դիրք բռնել եւ շատ քիչ զոհով նպատակի ծառայել, այս պարագան նոյնիսկ Սարաջեան չէ կարող ուրանալ։ Որովհետեւ այն ժամանակի հանգամանքները այսօրվանից շատ տարբեր էին, եւ Թաւրիզը երբէք չէ տեսնելու այդպիսի նպաստաւոր հանգամանք ու պայման։ Աւելորդ ենք համարում այս կէտը բացատրել, խնդրին մօտից ծանօթները շատ լաւ հասկանում են իմ տկնարկութիւնների նպատակը։

Ո՞ դիտէ, ապագան ի՞նչ հրէշներ է ծնելու, հայերը ո՞րչափ մեծ թեով զոհեր են տալու միեւնոյն նպատակին ակամայ եւ անգիտակ գործիք դառնալով...։ Եւ անշուշտ պէտք է ափսոսան այն օրը, որ իրանց ձեռքից բաց թողին նպաստաւոր ժամանակը։

Ուրեմն, խնդիրը մնում է վաղ թէ ուշ լինելու վրա, որը այնքան մեծ նշանակութիւն չունի հայերի համար, որքան նպաստաւոր կամ անպաստ լինելու խնդիրը։ Եւ անա մենք այս վերջին տեսակէտից պաշտպանում ենք այն ժամանակ տեղի ունենալիք ռուսական դրաւումը։ Սակայն այսօր միեւնոյն գաղափարին չենք ծառայում, որովհետեւ միեւնոյն նպաստաւոր հանգամանքները չենք տեսնում, կարող ենք ասել—որքան ուշ, այնքան լա՛։ մեր խօսքը անցեալ տարվայ դէպքերի մասին է, եւ որը Նիւթ էր դարձել Նոր-Կեանքի առաջնորդին։

Զը պէտք է մոռանալ նոյնպէս այն պարագան, թէ ռուսական դրաւումը վերջնական չէր լինելու այն ժամանակ։

ՎԱՐԴ-ՊԱՏՐԻԿՈՎԻ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԸ (38)

Կամաց կամաց պահապանները սկսեցին ինձ հաչա աչքով նայել. մանաւանդ որ Մաքսիմովն էլ բաւական յաճախ այցելում էր եւ խստիւ պատիրում որ ինձ լաւ նայեն։ Հետզհետէ վարժվեցի տաճկերէնին. ինքս էլ սկսեցի խօսել. պահապաններիս բացատրել նոյն իսկ իրանց անտանելի վիճակը չնորհիւ իրանց փտիչտի, կաչառակեր փաշաների եւ բթացած հոգեւորականների։ Գոնէ ըստ երեւոյթին նրանք համոզվեցին որ հայ յեղափոխականները ոչ թէ Թուրք ժողովրդի թշնամիները են այլ նրա կառավարութեան, որը հաւասար չափով տանջում է թէ իր հպատակ քրիստոնեայ ազգերին եւ թէ իրան տաճիկ ժողովրդին։ Բաւական համակրողներ Երեւան եկան այդ պահապանների մէջը, մանաւանդ երբ տեսան որ ես մատնացոյց էի անում ուղղակի, իրանց տանջանքի վրա՝ երբ նրանք զանգատվում էին թէ ամիսներով ոռճիկ չեն ստանում, չան նման չարչարվում են, իսկ ես ապացուցանում էի որ իրանց մեծերը ապրում են ամենափառաւոր կերպով, առանց աշխատելու եւ կեանքերը վտանգի ենթարկելու։ Մի երեք չորս հատ ոստիկաններ այնքան բարեկամացան հետս, որ ամէն օր տեղեկութիւն էին բերում միւս ձերբակալվածների մասին. մանաւանդ նրանցից մի երկուսը, որ գրագիր լինելով նոյն ատենում, ուր արտագրվում էին ձերբակալվածների գործերը, տեղեկութիւններ էին հասցնում ինձ։ Նրանցից մէկը մի օր յայտնեց որ գտել են Ներսէս Պատրիարքի թղթերը. նրանց հետ եղել են եւ Լօրիս Մէլիքովի նամակները. որոնցում Լօրիսը յայտնած է եղել իր կարծիքները հայկական գործերի մասին։ Պատմում էին թէ ինչպէս էին պահում իրանց ձերբակալվածները։ Բժիշկ Թիրեաքեան չարունակ մի մեծ գիրք է կարդալիս եղել, Աւետարան կամ Սուրբ գիրք. եւ Արփիարի մասին շատ բաներ էին ասում, բայց չեմ կարող իրր փաստեր տալ, որովհետեւ ոստիկանները կարող էին աղաւաղել եւ չափազանցնել։ Դրանց միջոցով իմացայ եւ Մամբրէի վաղուց լրտես ու դատաճան լինելը։ Ժանդարմներից մէկը այնքան մտերմացել էր հետս, որ ինձ փախցնելու ծրագիր էր առաջարկում, միայն այն պայմանով որ իրան էլ հետս տանեմ, որովհետեւ եթէ չը տանէի նրան կը սպանէին։ Այդ ժանդարմը յուսարէն էլ գիտէր. ինձ համար թուղթ եւ մի փոքր մատիտ բերեց, յուսարէն բառեր, նամակներ փոխ առաջնորդ Սարաջեան հայր սուրբի մօտ է գալիս եւ խնդրում, որ ժողովուրդի անապահով դրութիւնը հեռագրի Շահին եւ ազդեցիկ միջոցներ խնդրի։ Սարաջեան իրա դիւանագիտութեան վրա վրատահ (.°), իր մօտից հեռացնում է Թաջիր բաշին, նոյն իսկ ազատվում..., եւ իւկոյն հեռագրում է Շահին թէ քաղաքում կատարեալ ապահովութիւն է տիրում, եւ թէ կարգը վերահաստատվել է...։

Մի կողմից ռուսաց եւ ֆրանսիացոց եւ միւս կողմից անգլիացոց եւ Թուրքաց կոնսուլատների իրար հակասող յայտարարութիւնների վրա Սարաջեանի հեռագիրը մեծ նշանակութիւն է ստանում, եւ Շահի կառավարութիւնը համարձակվում է մերժել ռուսական առաջադրութիւնը։

Ռուսաց կոնսուլը եւ Թաջիր բաշին սաստիկ հակառակում են եւ ատում Սարաջեանին, եւ Սարաջեան նրանց այս վրէժխնդրութեան չուտով է զոհ գնում, մանաւանդ հակառակ իրան դիւանագիտական հմտութեան (.°) Թաջիր բաշի տարգած ծուռական է ինկնում, նրա կեղծ բարեկամութեան է վստահանում եւ այսպէս գլորվում է ծանր խամուռնքների մէջ, եւ վերջապէս զօրով հրաժարվելով տեղի է տալիս։

Այստեղ հարց է, թէ արդեօ՞ք ռուսական զօրքի մուտքը հայերին նպաստաւոր էր թէ ո՛չ։

Մենք պատասխանում ենք. նպաստաւոր կը լինէր։

Իսկ Նոր-Կեանք հակառակն է պնդում հայր Սարաջեանին իրաւունք տալով եւ նրա հետեւած ուղղութիւնը պաշտպանում է երկար ֆրազներով։

Խնդիրը ալօրիայի կողմից ճշմարիտ է երեւում, սակայն երկիրը ուսումնասիրող եւ ազատ կանխատեսող անհատը պրակտիկայի կողմից տարբեր, բոլորովին հակառակ եզրակացութեան է հասնում։

Մենք ռուսական ճնշող քաղաքականութեան համակրողներից չենք, մենք ատում ենք նոյն իսկ ռուսներին, սակայն խնդիրը երբ քննում ենք հայերի օգտվելու տեսակէտից, մեր վճիռը ռուսական քաղաքականութեան նպաստաւոր է գալիս Պարսկաստանի համար։

Այսպէս համոզվելու գլխաւոր երկու պատճառներ ունենք։

Նախ, որ վաղ թէ ուշ Արեւելեան լինելու է մի ռուսական նահանգ, սրան ոչ ոք չէ հակառակում։

Երկրորդ, որ անցեալ տարվայ խառնակութիւնների միջոցում՝ հայերը հեշտիւ կարող էին պաշտպանողական դիրք բռնել եւ շատ քիչ զոհով նպատակի ծառայել, այս պարագան նոյնիսկ Սարաջեան չէ կարող ուրանալ։ Որովհետեւ այն ժամանակի հանգամանքները այսօրվանից շատ տարբեր էին, եւ Թաւրիզը երբէք չէ տեսնելու այդպիսի նպաստաւոր հանգամանք ու պայման։ Աւելորդ ենք համարում այս կէտը բացատրել, խնդրին մօտից ծանօթները շատ լաւ հասկանում են իմ տկնարկութիւնների նպատակը։

Ո՞ դիտէ, ապագան ի՞նչ հրէշներ է ծնելու, հայերը ո՞րչափ մեծ թեով զոհեր են տալու միեւնոյն նպատակին ակամայ եւ անգիտակ գործիք դառնալով...։ Եւ անշուշտ պէտք է ափսոսան այն օրը, որ իրանց ձեռքից բաց թողին նպաստաւոր ժամանակը։

Ուրեմն, խնդիրը մնում է վաղ թէ ուշ լինելու վրա, որը այնքան մեծ նշանակութիւն չունի հայերի համար, որքան նպաստաւոր կամ անպաստ լինելու խնդիրը։ Եւ անա մենք այս վերջին տեսակէտից պաշտպանում ենք այն ժամանակ տեղի ունենալիք ռուսական դրաւումը։ Սակայն այսօր միեւնոյն գաղափարին չենք ծառայում, որովհետեւ միեւնոյն նպաստաւոր հանգամանքները չենք տեսնում, կարող ենք ասել—որքան ուշ, այնքան լա՛։ մեր խօսքը անցեալ տարվայ դէպքերի մասին է, եւ որը Նիւթ էր դարձել Նոր-Կեանքի առաջնորդին։

Զը պէտք է մոռանալ նոյնպէս այն պարագան, թէ ռուսական դրաւումը վերջնական չէր լինելու այն ժամանակ։

խաղաւութիւններ եւ երգեր էր ասում, իսկ ես գրում էի։ Մի դիշեր էլ երբ զարդիանը ու ոստիկանը քնած էին, ժանդարմը թելադրում էր, ես էլ գրում էի։ Գիշերվայ ժամը տասնը մէկն էր. յանկարծ դուռը բացվեց, ներս մտաւ մուավին գարդիանը, եւ բաւական բարձր ձայնով գոռաց. ո՞վ տուեց ձեզ այդ մատիտը եւ Թուղթը. ապա դառնալով ժանդարմին՝ իսկ դու էլ հայվանի պէս նայում ես։ Կրկին դարձաւ ինձ եւ աւելի բարկացած ասեց. տո՛ւր Թուղթը եւ մատիտը, եւ ասա՛ ո՞վ տուեց։

Ես ժպտալով նայեցի հաւատարիմ պահապանի երեսին եւ դիմելով մուավինին ասացի. մատիտը գտայ բակում, Թուղթը հասարակ Թուղթ է, թէյի փաթթոց, ո՛չ մատիտը կը տամ ձեզ, ո՛չ Թուղթը։ Ժանդարմը ինձ չարգիլեց նրա համար, որ ես նրան ասացի թէ միւդիրը ինձ իրաւունք է տուել մի կտոր մատիտ ունենալ Թուրքերէն բառեր գրելու եւ սովրելու համար։

Ժանդարմի աչքերը փայլեցին ուրախութիւնից, եւ նա ասեց.

—Այո, էֆէնտին ինձ այդպէս պատասխանեց, երբ ես ուզեցի արգիլել. եւ, ես էլ չզարմացայ, որովհետեւ գիտեմ որ էֆէնդու համար չատ բան չէ արգելված. մեզ չարունակ պատիրում են քաղաքավարի լինել էֆէնտիի հետ, այդ պատճառով էլ ես չը կարողացայ արգիլել եւ նրա ձեռքից խլել Թուղթն ու մատիտը։

—Էհ, լաւ, մուսիո Պատրիկոֆ. Թուղթն ու մատիտը տուէք, նորից չարաճճիութիւն էք արել. ձեզ համար ոչինչ, բայց եթէ իմանան, մենք կը պատժվենք։ Ձեզ ամեն բան կարելի է թող բացի Թղթից եւ գրիչից, խնդրեմ տուէք.

—Այ, այդպէս խօսեցէք, պատասխանեցի ես։ Մեր խօսած միջոցին զարդել էին եւ քնած ոստիկանը ու գարդիանը. նրանք սարսափից ծրպտուն չէին հանում. որովհետեւ երկուսը միասին քնելու իրաւունք չունէին, նոյն իսկ ո՛չ մէկը. նրանք երեքն ալ պարտաւոր էին ինձ հրկել։

Թուղթն էլ, մատիտն էլ տի՛ւ եւ յայտնեցի որ մէջը բան չկայ, ոչ էլ նամակ է. այլ յուշարէն բառեր եւ երգ։ Մուավինը դուրս գնաց կէս ժամից յետոյ քնաթաթախ ոստիկանը եւ գարդիանը նորից քնեցին. ժանդարմը սկսեց ձեռքերս սեղմել եւ չնորհակալութիւն յայտնել որ իրան ազատեցի, ու խոստացաւ մինչեւ մահ իմ բարեկամ մնալ։

(Շարունակելի)

նակ, այլ մի քանի հազար կազակների ներկայութիւնը միայն պիտի բաւէր երկիրը խաղաղ կառավարելու. նոյն իսկ պարսիկ պաշտօնեաների ձեռքով, ինչպէս այժմ սովոր է ունենում նոյն բանը Եգիպտոսում անգլիացիների ձեռքով։

Եւ այս հանգամանքից հայերը շատ էին օգտվելու, ոչ ռուսաց ճնշող քաղաքականութիւնը եւ ոչ էլ պարսից կեղեքիչ վարչութիւնը չէր տիրելու. մինչեւ ռուսական վերջնական գրաւումը երկիրը շատ ազատ էր լինելու, եւ հայերը այդ ազատութիւնից օգտվելով բարգաւաճելու եւ հարստանալու էին։

Ներկայ դարում տէօրիան մեծ նշանակութիւն չունի, բոլոր ազգերը պրատիկ են եղած, մենք էլ ընդհանուր հոսանքի հետեւելով պրատիկ ազգ լինենք, այժմ տէօրիաները լեգենդներ են նկատվում, եւ մենք մեր ազգի այս ճգնաժամում ուտոպիներով չենք կարող վերականգնել ու զարգանալ։

ՄԻՐԶԱ.

Փ. Պոլիս, 25 Մայիս.

Այս կիրակի Զար-Սիմէօնի փառաւոր պարտէզին հունգարական տաղաւարին մէջ բացուեցաւ արհեստներու մրցումը, որ հաճելի եւ օգտակար շաբաթ մը պիտի նուիրէ Փ. Պոլսի եւ շրջակայ քաղաքներու, գիւղերու բնակիչներուն։ Տեղական արհեստագէտներու զանազան արտադրութեանց նմուշները գեղեցիկ եւ հաճելի տեսարան մը կընծայեն։ Այցելուներու խուռն բազմութիւն մը կը յաճախէ ամէն օր. արհեստական թեր ու դէմ կարծիքներ կը փոխանակուին, մասնագէտները իրենց վճիռները կարձակեն. ամէն անհատ նոր ոգեւորութիւն մը կըստանայ եւ տրամադրութիւնները կաւելնան յառաջիկայ մրցումին աւելի ճոխ եւ աւելի գեղեցիկ նիւթերով մասնակցելու։

Մրցումի գրուած նիւթերու զանազանութիւնը հրապուրիչ է։ Զանգակներ, երկաթէ եւ պողպատէ գործիքներ, հագուստներ, ձեռագործներ, գորգեր, կօշիկներ, մեքենաներ, հողէ եւ պղինձէ ամաններ, ոսկիէ եւ արծաթէ զարդեր, տակառներ, վերջապէս հազար ու մէկ տեսակ նիւթեր զետեղուած են ամէն կողմ։

Այս մրցումը անգամ մըն ալ կը հաստատէ թէ պուլկար կառավարութիւնը ամէն միջոց կը գործածէ արհեստներու զարգացումին համար իշխանապետութեան ամէն կողմը։ Մասնագէտ անձեր կը վկայեն թէ մեծամեծ քայլեր առնուած են եւ ապագային յառաջդիմութեան մեծ յոյսեր կան։

Ուրախալի է տեսնել որ մեր հայ արհեստաւորները, գրեթէ ամէն ճիւղի մէջ, պատուաւոր դիրքեր գրաւած են։ Գէորգ Մէխիլեան եղբարք իրենց ներկի գործարանի արտադրութիւններով, Գարակէօզեաններ իրենց խավլուներով, Մկրտիչ Նէլսոնեան իր թամբու գործիքներով, Յակոբ Միսաքեան իր ռոլիքներով, տիկին Հարէնց եւ Գէորգ Միրեան իրենց ձեռագործներով, Յովհաննէս Պօղոսեան եւ Հայկանուշ Պէրպէրեան իրենց գորգերով, Թորոս Գէորգեան եւ Կարապետ Աղաճանեան իրենց երկաթէ եւ պողպատէ գործիքներով, Մարտիրոս Թիրոյեան իր թիթեղեայ տուփերով, Խաչիկ Թօշաֆճեան, Երուանդ Մասքալաճեան եւ Պալճեան իրենց ոսկիէ եւ արծաթէ զարդերով, Յովհաննէս Զաքարեան իր կօշիկներով, վերջապէս հայ մըն ալ իր մանրանկար շոգենաւով, որ պարտէզին լիճին վրայ կատարուած փորձերուն մէջ՝ մեծ յաջողութեամբ նաւարկած է, եւ դեռ բազմաթիւ ուրիշներ, մրցումին փայլը կաւելցնեն։

Ճաւալի է որ մեր դերձակ եւ կօշկակար բարեկամները իրենց բացակայութեամբ կը փայլէին մրցումին մէջ։ Ասոնց մէջ կը գտնուին քաղաքիս ամենէն փայլուն ներկայացուցիչները, բայց անհոգութիւնը եւ մրցումի օգուտին բացակայութիւնը արգելքներ եղան։ Կը յուսանք թէ յառաջիկայ մրցումին մէջ մեր բոլոր արհեստաւորները պիտի չը թերանան ներկայանալ։

Ընդարձակ սրահին մէջ մրցակիցներէն ոմանք շահաւէտ առեւտուր մը կընեն։ Դռանը քով պուլկար մը գաւազաններ կը վաճառէ, գեղեցիկ եւ հաստատուն, Էթրոփոլի մէջ պատրաստուած։ Քիչ մը անդին Տ. Խաչիկ Թօշաֆճեան, սահուն պուլկարերէնով մը զարդեր կը վաճառէ։ Սեբաստացի հայ կին մը գորգ կը շինէ. յոյն երիտասարդ մը հերոսական մեքենայներով գեղեցիկ կտաւներ կը գործէ։ Ամէն կողմ անպակաս են այցելուին ուշադրութիւնը գրաւող տեսարաններ։

Նշանակութեան արժանի է կառավարութեան հաստատած դպրոցներու արտադրութիւնը, որք անգամ մըն ալ կապացուցանեն թէ կազմակերպուած հաստատութիւնները միշտ գերազանց արդիւնք կուտան։ Ներկի եւ տարազագործութեան, պղինձէ ամաններու, հագուստներու, հողէ ամաններու եւ երկաթէ գործիքներու կառավարական դպրոցները մեծ ուշադրութիւն գրաւեցին։

Մրցումին մէջ ամենէն աւելի հիացում պատճառած նիւթն է տիկին Հարէնցի մէկ ձեռագործ գեղանկարը։ Ամբողջ գործը այնչափ սքանչելապէս աւեղնագործուած է որ կրնայ պատիւ բերել ու բազական մեծ մրցումներու անգամ։ Չը կայ անձ մը որ իր հիացումը չը յայտնէ։

Մասնագէտներ արդէն սկսած են գնահատումի դժուար գործին եւ մրցանակները կորոշուին։ Յառաջիկայ երկուշաբթի կը փակուի մրցումը։

Թղթակից

Պուրկազ, 25 Մայիս.

Ուրախութեամբ կը ծանուցանեմ թէ բաւական ատենէ ի վեր երեսի վրայ մնացած մեր Հայկազեան երկսեռ վարժարանը վերաբացուեցաւ։ Արդարեւ ցաւալի էր դպրոցին մինչեւ հիմայ փակ մնալը. և սակայն իրաց այդ վիճակը պէտք է վերագրել աւելի այն անհատներուն որոնք փոխանակ խղճմտօրէն աշխատելու որպէսզի ազգային հաստատութիւնները միշտ բարգաւաճ դրութեան մէջ գտնուին, ընդհակառակը իրենց ժամանակը կանցնեն լրագիրներու սխալ տեղեկութիւններ տալով և անիրաւ յարձակումներ ընելով. ինչպէս օրինակի համար ըրած է «Իրաւունք»ի 70 թիւին մէջ Պուրկազէն գրուած նամակին հեղինակը։

Յ. Փ.

——)·(——

ՊՈԼՍՈՅ ԿԵԱՆՔԸ

Օրուան խօսակցութիւնները բնականաբար կը դառնան միշտ Գերմանիոյ կայսեր մօտալուտ ճանապարհորդութեան շուրջը։ Երբեք այսքան ջանքեր թափուած չէին, օտար վեհապետի մը ընդունելութեան առթիւ, մայրաքաղաքը շքեղ երեւցնելու։ Ծեփի, ներկի և աւազի շռայլ սպառում մը կը շպարէ բոլոր այն շէնքերը ու փողոցները ուրկէց որ պիտի անցնի մեծ Թուրքին հիւրը՝ մեծ Թէվտոնը։ Անմիտ թուրքերը փքացած են այս այցելութենէն և զայն կը նկատեն իբր կայսրութեան տեւականութեան մէկ գրաւականը։ Իսկ քիչ շա՞տ խելացի մասը ակռայ կը կճռտացնէ և չարաչար կը գանգատի այս անհագին ծախքերուն (մէկ միլեոն օսմ. ոսկի) համար, և կը խորհի թէ հրէական պարզ շահագործում մըն է զոր Վիլհէլմ ի գործ կը դնէ Թուրքիոյ մէջ, առանց անոր մեծ օգուտներ մատուցանելու։

Արդարեւ Գերմանիա որ այնքան շահաւոր մենաշնորհներ ձեռք բերած է, այնքան թափթփուկ հրացաններ և թնդանօթներ իբր լաւ ապրանքներ քշած է Թուրքին, և իր զաւակներէն հարիւրաւորներ այնքան իւղոտ պաշտօններու հասցուցած, իր բարեացակամութիւնը գործնական կերպով ցոյց տալու ամէն պարագաներուն, ճարպիկօրէն ձեռնպահ մնացած է։ Այսպէս Եգիպտոսի խնդրին մէջ գերման պատուիրակը անգլիական պատուիրակին հետ համերաշխ գործած է. թուրքիոյ նախկին պատերազմին ատեն Գերմանիա միմիայն իր ազգակիցներուն շահերը աչքի առջեւ ունեցած է, և անգամ մը այդ խնդիրը լուծելուն պէս, միւս պետութիւններուն հետ միաբանած է Թեսալիոյ պարպումը պահանջելու, գրեթէ նոյնը նաեւ Կրետական խնդրին մէջ։

Դրամական կարօտութիւնը ահռելի է։ Մաքսային ոչ միայն ներկայ, այլ և ապագայ գրեթէ բոլոր հասոյթները արդէն գրաւի դրուած ըլլալով, ելեւմտական նախարարները խելքերնին թռցնելու վրայ են։ Անանուն նամակներ ղրկուած են պալատ, յայտնելով թէ ժողովուրդը անօթի կը մնայ։ Նոյն իսկ այս մօտօք յայտարարութիւններ փակցուած են մզկիթներու և տուներու վրայ։ Այս շարժման մէջ սոֆթաներն ալ անմասն չեն մնար։ Յատուկ աղերսագրով մը իրենց դրպանին վիճակը իմացուցած են պալատան, որ գիտնալով թէ սոֆթաները կատակ չեն ըներ երբ խնդիրը իրենց փորերուն հետ կապակցութիւն ունի, խնդրանքը լուրջ նկատողութեան առած է։ Սուլթանը իսկոյն հրամայած է որ յունական տուգանքի գումարէն մաս մը վերցուի մէջ մէկ ամսական վճարելու բոլոր պաշտօնեաներուն, որոնք սոփթայական բողոքին շնորհիւ նուազ անձուկ ամիս մը պիտի անցնեն։ Այդ գումարին վրայ Սուլթանը կը գուրգուրար և զայն աչքին լոյսին պէս կը պահէր ապագայ ո և է պատերազմի մը մէջ գործածելու համար։ Այժմ 900,000 ոսկի մնացած է, և շատ հաւանական է որ շատ չանցած, այն ալ սպառի շռայլութեանց՝ և անզեկ վարչութեան մը անդունդներուն մէջ փճանալով։

ՔՐՈՆԻԿ

Կովկասի մէջ զրոյց կայ թէ Կաթողիկոսարանը Էջմիածնէն Բէթէրսպուրկ պիտի փոխադրուի։ Լուրը որքան ալ անհաւանական և անհեթեթ՝ և սակայն աչքի առաջ ունենալով թէ իրերը ռուս կառավարութեան բարի կամեցողութենէն կախուած են, կրնանք սպասել մինչեւ անգամ Լուսաւորչի աթոռին Սիպերիա փոխադրուելու անակընկալին։

—Գերմանացի միսիոնարներ մօտերս Եդեսիայի մէջ պիտի հաստատեն գորգաշինութեան արհեստանոց, մը որուն կանխապատրաստութեանց մեծ մասը արդէն աւարտած է։ Նոյն միսիոնարները Տիգրանակերտի մէջ Որբանոց մըն ալ պիտի հաստատեն։

—Կրօնական ժողովը Ռուսչուքի Տէր Կարապետ Աւագ Քահանային յանձնարարեր է որ Պուլկարիոյ հայ եկեղեցիները պաշտօնավարող քահանաներուն մէկ ցուցակը պատրաստէ, յիշելով իւրաքանչիւրին ծառայութիւնը, արժանիքը և այլն։ Կը յուսանք որ Տ. Կարապետ հայրը այդ նշանակալից «և այլն»ը ականջի ետի չթողուր։

—Փաստաբան Սուրէնեան Աւետիս էֆէնտիին խօսքը բանով մարդ է եղեր։ Արդէն իր աքսորագիրը Շէյխ-իւլ-Իսլամին տրուած և անկէց ալ փոխանցուած է Ռումէլիի դատաքննութեան ատենին, որ քննիչի և տեղեկաբերի դեր կը կատարէ դատավարութեան սկսելէն առաջ։ Աւազակապետ Գրիգոր Գարակէօզեան խոյս տուեր է պէտք եղած բացատրութիւնները տալէ։ Այժմ պաշտօնապէս պիտի հրաւիրուի, և եթէ նորէն չներկայանայ, ի բացակայութեան պիտի դատուի։ Դիտուած է որ զարավերջիկ աւազակները և դաւաճանները դատի օրերէն շատ չեն ախորժիր։

—Թիֆլիսէն, Փոթիէն, Սուխումէն և ռուսական ուրիշ քաղաքներու գաղթական հայերը խումբ խումբ Բաթում կը դիմեն անկէց հայրենիք վերադառնա-

լու համար ։ Ամսոյս 15ին, 70ի չափ մնչեցիներ վերադարձած են, իրենց քաղաքը ուր ապրուստը չատ աժան է այս պահուս ։

—Գանձակի հրապարակին վրայ, ջուրի խնդրոյ մը առթիւ, ամսոյս 13ին, հայերու և պարսիկներու միջեւ լուրջ կռիւ մը ծագեր է որ բարեբախտաբար չուտ մը վերջացեր է ոստիկանութեան միջամտութեան շնորհիւ ։

—Իգմիրի Ռումանական Հիւպատոսին աղջիկը և հարուստ նպաստեր Հաճի Տավուտի որդին, Պուճալի կողմը հեծանիւով պտոյտ ըրած ատենին, լեռը տարուեր են աւազակներու ձեռքով, որոնք հիմա 3,000 ոսկի փրկանք կը պահանջեն ։

—Պատրիարքարանը պաշտօնապէս ծանուցանելով ողբացեալ Թրեանցի մահը, կը հրաւիրէ օրինաւոր ժառանգորդները որպէս զի փութան պատրիարքարան ներկայանալ անոր . . . ժառանգութեան տիրանալու համար ։ Հէգ Թրեանց, մահէդ ետքն ալ կը յաջողիս մեզ խնդացնել ։

—Ռուսական թերթ մը, կենսագրական ծանօթութիւններ հրատարակած է Իստի-սու գիւղը բնակող Սամսոն Տէր Պօղոսեանի վրայ, պատմելով թէ ինչպէս այդ հայը Ռուս-Թուրք պատերազմին ատեն Պայազիտի բերդին մէջ պաշարուած 1500 Ռուս զինուորներու կեանքը փրկած է ։

Երանի թէ, կըսէ Նոր-Դար, բոլոր ռուս թերթերը այդպէս բարեխիղճ կերպով յիշէին հայուն մատուցած ծառայութիւնները ռուսաց պետութեան ։

—Պոլսոյ թուրքերը բացարձակ կը յայտարարեն թէ Հայաստանի զանազան քաղաքներուն մէջ ամրութիւններ կառուցանելու ձեռնարկը, պարզապէս ռուսական աւպագայ յարձակումներու դիմադրելու համար է ։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԷՊՔԵՐ

ՓՐԿՈՒԹԵԱՆ ՄՕՏ

Կրետական քրիստոնեայ ժողովուրդը յոյսի և հեշտութեան ժամեր կանցնէ ։ Փրկութիւնը իրենց սեմին վրայ է արդէն։ Ինչպէս գրած էինք, վերջնագիրը տրուած է . անիկա կտրուկ և անողոք է ։ Առ առաւելն մէկ ամիս պայմանաժամով, Թուրք իշխանութեանց վերջին հետքերն ալ ջնջուած պիտի ըլլան կղզիէն։ Թուրք նախարարները ժողով ժողովի վրայ կը գումարեն առանց վճռական որոշման մը յանգելու ։ Վերջերս փոքրիկ զիջողութիւն մը ձեռք բերելու փորձած են, խնդրելով որ գէթ կղզիին ոևէ մէկ կէտին վրայ քանի մը օսմ. զինուորներ պահելու թոյլտուութիւն ըլլայ, Սուլթանին գերիշխանութիւնը յայտնի կերպով ցուցնելու համար ։ Թուրքը, միշտ ինքզինքը խաբելու տրամադիր, այսպիսի փծուն գոհացումներու մէջ գտնել կը կարծէ իր արժանապատուութեան փրկութիւնը ։ Նոյն իսկ եթէ այս արտօնութիւնը չզլացուի, ակներեւ կերեւայ թէ փրկութեան ժամը վերջնականապէս հնչած է Կրետէի համար ։ Երեւոյթներէն դատելով, Եւրոպան այս անգամ չպիտի վարանի ի գործ դնելու բռնական միջոցները որոնցմով սպառնացած է Թուրքիոյ, եթէ սա մերժէ վերջնագրին պահանջումները ։

Այս միջոցները չատ խիստ չեն ։ Ամենուն կարծիքն այն է թէ Եւրոպան փոխանակ նաւատորմ մը խրկելու Տարտանէլ, պարզապէս Կրետէն ամէն կողմէ պիտի պաշարէ, բանտարկելով հոն դանըուած թուրք զինուորները ։

Իտալիան արդէն վաշտ մը հետեւակ զօրքեր և երկու մարտանաւ ղրկած է կրետական ջուրերը ։ Բռնական միջոցները ի հարկէ չատ աւելի ազդեցիկ կրնային ըլլալ, եթէ ճիշդ այդ փափուկ վայրկենին Վիլհելմի ներկայութիւնը Պոլսոյ մէջ, Սուլթանը երեւս չհանէր և մասամբ չխանգարէր եւրոպեան ծրագիրները ։

——

ՉԻՆ

Երկնային կայսրութիւնը, օսմանեան կայսրութեան պէս, այն երկիրներէն է որ ծեր, հիւանդ, և միլիոնատէր ազգականի մը պէս, անհամբեր ժառանգորդներու ախորժակը կը գրգռէ։ Շնորհիւ եւրոպական տէրութիւններու ոտնձգութիւններուն, չատոնց արդէն այդ ճահճային դանդաղ երկիրը իր խաղաղութիւնը կորսնցուցած է ։ Պարզապէս ազդեցութեան կռիւ մըն է որ կը մըղուի այնտեղ ։ Եւրոպական տէրութիւնները, գլխաւորաբար Ռուսիա և Անգլիա իրենց համակիր պետական անձեր կուզեն տեսնել կառավարութեան գլուխը ։ Եւ յետոյ, Չինաստանի մէջ եւս երկու որոշ դասակարգեր գոյութիւն ունին . մէկը բարենորոգումներ կուզէ մտցնել երկրին մէջ, միւսը ամէն փոփոխութեան հակառակ է ։ Չինացի ժողովուրդին ստուար մասը այս վերջին գաղափարէն է ։ Եւ ասոր համար է որ օրերն թշնամին է եւրոպացիին և առիթը չփախցներ միսիոնարները ջարդելու, դեսպանատուններուն վրայ յարձակելու, բանեցնելով թէ իր միակ տէրն է, ինչպէս դարերէ ի վեր, ամէն ետքն ալ ինքն իր մէջ ամփոփուած ապրիլ վիթխարի պարիսպներուն ետին ։ Նոյնպէս Մայր-Կայսրուհին, որ վերջերս կառավարութեան ղեկը ձեռք առաւ, վերջին ծայր թշնամի է ոևէ բարենորոգումի, և դժոխային մեքենայութիւններով, բոլոր յառաջդիմասէր պետական անձերը բնաջինջ ընելու զաղտնիքը գիտէ ։ Գալով երիտասարդ կայսեր, ոչնչութիւն մըև պարզ գործիք մըն է իր նենգամիտ մօր ձեռքերուն մէջ ։ Եւ արդէն յայտնի չէ թէ ո՞ւր է թէ մեռած . այս կէտը մութի մէջ է տակաւին . և չատ հաւանական կերեւայ թէ թունաւորուած կամ խողխողուած է վերջին պալատական յեղափոխութեան միջոցին ։

——

ՍՊԱՆԻԱ ԵՒ ԱՄԵՐԻԿԱ

Խաղաղութեան յանձնախմբին նիստերը կը շարունակուին, բայց գործերը այնքան սահուն չեն ընթանար ։ Ամերիկան Լիւսօն կղզին ամբողջապէս պահանջած է . մինչ սպանիացի պատուիրակները որոշում տալէ առաջ նոր հրահանգներ խնդրած են Մատրիտէ ։ Կըսուի թէ Մաք-Քինլի արտօնութիւն տուեր է ամերիկեան պատուիրակներուն, որ եթէ սպանիացիք չհամակերպին իրենց պահանջումներուն, անմիջապէս դադրեցնեն յանձնաժողովին աշխատութիւնները ։

——

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Ֆրանսական կառավարութիւնը Օռլեանի դուքսին վերջին յայտարարութենէն կատղած, ոստիկանական բոլոր հրամանատարներուն յիշեցուցեր է իշխաններու արտաքսման օրէնքը, և հրամայեր է որ խիստ ձերբակալեն դուքսը, եթէ երբեք այս վերջինը ոտք կոխէ ֆրանսական հողի վրայ ։

—Զարը Տանիմարքա մնացած է Լուիզ թագուհիին յուղարկաւորութեան ներկայ գտնուելու ։

—Պերանայի մէջ, թուրք զինուորները 8 տարեկան քրիստոնեայ աղջիկ մը բռնաբարած ըլլալով, քրիստոնեայներու և զինուորներու մէջ կռիւ մը ծագեր է ։ Երկու կողմէն ալ սպաննուածներ և վիրաւորներ կան ։ Սատաէտտին փաշա Պերանա ղրկած է խաղաղութիւնը վերահաստատելու ։

—Կըսուի թէ Սերպիոյ Աղեքսանդր թագաւորը Պիարիցի մէջ տեսակցութիւն մը պիտի ունենայ Մուրավիէվ կոմսին հետ, Սերպ և ռուսական յարաբերութիւնները բարելաւելու նպատակով, Միլան թագաւորին հեռացումով ։

ՆՇԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ

Ցառաջիկայ շաբաթ գիշեր, ժամը ութ ու կէսին, Սայէտինէնիյէ սրահին մէջ, Պ. Նաթան Ամիրխանեանց նուագահանդէս մը պիտի տայ, աջակցութեամբ Օր. Ամիրխանեանցի և Բժիշկ Դոկտրովի ։

——)·(——

Ս. Զ. Դ.

Պորտուգալի Օրէն Նախօսպը Թուականէս երկու ամիս ետքը վարձու պիտի տրուի տարեկան 3,000 ֆրանքով ։ Ցիշեալ օթելը կը պարունակէ 7 սենեակ ամբողջովին կահաւորուած եւ 15 անկողին իրենց կազմածներով ։ Նոյնպէս ստորնայարկը ճաշարան մը ունի կահաւորուած, այնպէս որ բացառիկ ծախքեր ընելու պէտք չկայ ։ Փափագողները կը հրաւիրուին Պուրկազ, Պ. Փոստ Բարթուղիմէսի հետ տեսակցելու ։

ՎԱՐԴՕ

ԵՐԿՈՒ ՍԷՐ

(ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԿԵԱՆՔԷՑ)

—)·(—

)(Գին 1 Ֆրանք)(

Մնացած սակաւաթիւ օրինակները կը ծախուին Վառնայի մէջ Շարժումի խմբագրատունը, Ֆիլիպէ՝ Տ. Անտոն Կոչի մօտ, Ռուսչուք՝ Հայկ Մալախեանի սրճարանը, Սոֆիա՝ Տ. Մուչեղ Արծրունիի քով ։

Մօտերս մամուլին կը յանձնուի նոյն հեղինակին «Բանութեան գոհերը» ։

ՊՕՐՍԱ

Վառնա 30 Սեպտեմբեր

ՊՈՒՂՏԱՅ

Վակօն, լիպրա 55—58, հէքթօլ. 8.15—9.70 ֆրանք

Արապա, լիպրա 55—60 հէքթօլ. 9—12 ֆրանք

ԱՐԲԱ

Լիպրա 42—50 հէքթօլ. 5.20—5.80 ֆրանք

ԵՈՒԼԱՖ

Կիւնտէ 8—10 արապա կէլմէքաէ տիր. 4—4.40 ֆրանք

ՃԱՐՐ

Կիւնտէ 5—6 արապա կէլմէքաէ տիր. 58—60 լիպրա, 4.60—5 ֆրանք

ՖԱՍՈՒԼԵՍ

Կիւնտէ 70—80 առապա կէլմէքաէ տիր. 100 օգգաը 15—21 ֆր. մալա կէօրէ

Առապա մուամէլէսի՝ Նաբոլէոն 21 ֆրանք հիսապը իլէ տիր.

Կիւնտէ 15—20 վակօն, 200—250 արապա պուղտայ, 70—80 արապա արբա կէլմէքաէ տիր ։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ „ՇԱՐԺՈՒՄ“Ի

Կը տպագրուին ամէն լեզուէ այցետոմս, հասցէատոմս, նամակագլուխ, հարսանեկան հրաւիրագիր, մահազդ, ինչպէս նաև պրօշիւրներ ։

Գիները յոյժ դիւրամատչելի ։ Ուրիշ քաղաքներէ եկած յանձնարարութիւններ ճշդութեամբ և փութով կը կատարուին ։

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Ս. ՍԱՊԱՀ-ԳԻՒԼԵԱՆ

—)·(—

ԵՒՐՈՊԱՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴՐՈՒԹԻՒՆԸ

ԲԵՐԼԻՆԻ ԴԱՇՆԱԴՐՈՒԹԵՆԷՆ ՑԵՏՈՅ

—)·(—

ԳԻՆ 1 ՖՐԱՆՔ

Կը վաճառուի Շարժումի խմբագրատունը ։

„ՇԱՐԺՈՒՄ“

Վառնայի մէջ կը վաճառուի Մուսալլա, Թահմիզ Կէօզլիւքճեան վաճառատանը, և Ապտուրրահման մզկիթին դէմը հայկական գրատունը, Ա. Զարդհանէլեանի քով ։

Печатница „Взаимность“ Варна.